Ուրվագիր տասներկուերորդ

Փորձառաբար ապրել ու վայելել նոր ուխտի բովանդակությունը մեր հոգևոր փորձառության համաձայն՝ Աստծու տնտեսության իրագործման համար

Գրվածքների ընթերցում. Երմ 31:31-34, Եբր 8:8-12, Հռմ 8:2, 28-29, 12:1-2

I. Հիմնվելով այն փաստի վրա, որ Երեմիան մարգարեանում է նոր ուխտի վերաբերյալ, Երեմիայի Գիրքը կարելի է համարել հինկտակարանյան գիրք, որը նաև նորկտակարանյան գիրք է. մենք պետք է տեսնենք և յուրացնենք նոր ուխտի՝ որպես Աստծու կողմից մեզ տված կտակի բովանդակությունը՝ Երմ 31:31-34, Եբր 8:8-12.

Ա. Նոր ուխտում չորս օրհնություն է խոստացված.

1. Ողոքումը մեր անարդարությունների համար և մեր մեղքերը մոռանալը (մեր մեղքերի ներումը)՝ խ. 12:
2. Կյանքի օրենքը մեր մեջ ներդնելը աստվածային կյանքը ներդնելու շնորհիվ՝ խ. 10ա:
3. Աստծուն՝ որպես մեր Աստծու, ունենալու և Նրա ժողովուրդը լինելու արտոնությունը՝ խ. 10բ:
4. Կյանքի գործառույթը, որը մեզ թույլ է տալիս ճանաչելու Նրան կյանքի ներքին ճանապարհով՝ խ. 11:

Բ. Քանի որ մեղքերի ներումը միայն միջոց է Աստծու նպատակին հասնելու, Գրվածքի այս հատվածում մեղքերի ներումն ամենավերջում է զետեղված. սակայն ըստ մեր հոգևոր փորձառության՝ մենք նախ՝ մաքրում ենք ձեռք բերում, որը բխում է ներումից, այնուհետև՝ վայելում ենք Աստծուն՝ որպես կյանքի օրենքի, դառնում ենք Աստծու մարդիկ կյանքի օրենքում և ներքին ճանապարհով Աստծու ավելի խոր գիտելիք ենք ձեռք բերում՝ հմմտ խ. 12:

II. «Ես կողոքվեմ նրանց անարդարությունների հանդեպ և նրանց մեղքերն այլևս բնավ չեմ հիշի»՝ խ. 12, Երմ 31:34բ.

Ա. Քրիստոսը մեր մեղքերի համար ողոքում կատարեց, որպեսզի խաղաղեցնի Աստծու արդարությունը, հաշտեցնի մեզ՝ բավարարելով Աստծու արդարության պահանջները՝ Եբր 2:17:

Բ. Քրիստոսի թանկագին և համաարդյունավետ արյունը լուծում է մեր բոլոր խնդիրները, որպեսզի կարողանանք մշտապես մնալ Աստծու հետ հաղորդակցության մեջ և շարունակաբար վայելել Նրա օրգանական փրկությունը՝ Ա Հվի 1:7-9, 2:1-2:

1. Աստծու առջև Տիրոջ փրկագնող արյունը մեզ մաքրել է մեկընդմիշտ, հավիտենապես (Եբր 9:12, 14), և այդ մաքրման արդյունավետությունը կրկնության կարիք չունի:
2. Սակայն մեր խղճում մենք նորից ու նորից Տիրոջ թանկագին արյան մշտական մաքրման ակնթարթային կիրառման կարիք ունենք ամեն անգամ, երբ Աստծու հետ հաղորդակցության մեջ մեր խիղճը լուսավորվում է աստվածային լույսով:
3. Երբ Աստված ներում է մեզ, Նա անմիջապես ջնջում է մեր մեղքերը Իր հիշողությունից և այլևս դրանք չի հիշում. մեղքերի ներումը նշանակում

է Աստծու առջև մեր դեմ մեղքի մեղադրանքների հեռացումը, որպեսզի մենք ազատվենք Աստծու արդարության պատժից՝ Հվի 5:24.

ա. Երբ Աստված ներում է մեր մեղքերը, Նա այնպես է անում, որ մեր գործած մեղքերը հեռանում են մեզնից՝ Սղմ 103:12, Ղտց 16:7-10, 15-22:

բ. Աստծու՝ մեր մեղքերը ներելու արդյունքը Նրանից մեր երկյուղելն ու Նրան մեր սիրելն է Նրա հետ վերականգնված մեր հաղորդակցության մեջ՝ Սղմ 130:4, Ղկս 7:47:

Գ. Քրիստոսի թանկագին արյունը բավարարում է Աստծուն. այն հավատացյալների մուտքն է առ Աստված, և այն հաղթահարում է թշնամու բոլոր մեղադրանքները (Ելց 12:13, Եփս 2:13, Ա Պտ 1:18-19, Եբր 10:19-20, 22, 9:14, Ա Հվի 1:7, 9, Հյտ 12:10-11). Տիրոջ թանկագին արյունը նաև հավիտենական ուխտի արյունն է (Մտթ 26:28, Եբր 13:20), որի նախատիպն այն արյունն է, որի միջոցով քահանայապետը Ղևտացվոց 16-ում մտնում էր Սրբությունների Սրբությունը.

1. Ուխտի արյունը մեզ թույլ է տալիս մտնել գործնական Սրբությունների Սրբությունը (Եբր 10:19 20)՝ մեր հոգին (Եփս 2:22, Բ Տմթ 4:22), որպեսզի վայելենք Աստծուն ու լցվենք Նրանով:
2. Նոր Կտակարանում եղող հայտնության համաձայն՝ ուխտի արյամբ մենք ոչ միայն բերվում ենք Աստծու ներկայության մեջ, այլև հենց Աստծու մեջ. փրկագնող ու մաքրող արյունը մեզ բերում է Աստծո՜ւ մեջ:
3. Ուխտի արյունը գլխավորապես այն բանի համար է, որ Աստված լինի մեր բաժինը մեր վայելքի համար՝ հմմտ Սղմ 27:4, 73:16-17, 25, Ա Կրթ 2:9, Եբր 10:19-20:
4. Վերջապես՝ Քրիստոսի արյունը՝ որպես նոր ուխտի արյունը (Մտթ 26:28, Ղկս 22:20), Աստծու մարդկանց բերում է նոր ուխտի ավելի լավ բաներին, որում Աստված իր մարդկանց տալիս է նոր սիրտ, նոր հոգի, Իր Հոգուն, կյանքի ներքին օրենքը (որը մատնանշում է Իրեն՝ Աստծուն՝ Իր բնությամբ, կյանքով, հատկանիշներով և առաքինություններով հանդերձ) և կյանքի՝ Աստծուն ճանաչելու ընդունակությունը (Երմ 31:33-34, Եզկ 36:26-27, Եբր 8:10-12):
5. Ի վերջո նոր ուխտի՝ հավիտենական ուխտի արյունը (13:20), Աստծու մարդկանց թույլ է տալիս ծառայել Իրեն (9:14) և Աստծու մարդկանց բերում է Աստծու՝ որպես իրենց բաժնի (կյանքի ծառի ու կյանքի ջրի) լիակատար վայելքին և՛ հիմա, և՛ հավիտյան (Հյտ 7:14, 17, 22:1-2, 14, 17):

III. «Իմ օրենքները նրանց մտքի մեջ կներդնեմ և նրանց սրտերի վրա դրանք կգրեմ»՝ Եբր 8:10, Երմ 31:33ա:

Ա. Նոր ուխտի կենտրոնը, կենտրոնականությունը կյանքի ներքին օրենքն է. աստվածային կյանքի օրենքը՝ կյանքի Հոգու օրենքը (Հռմ 8:2), աստվածային կյանքի ինքնաշխատ սկզբունքն ու ինքնաբերական ուժն է:

Բ. Եռամեկ Աստված պատրաստվել է մարմնացման, խաչելության, հարության և համբարձման միջոցով՝ դառնալով կյանքի Հոգու օրենքը՝ ներդրված մեր հոգու մեջ որպես «գիտական» օրենք, ինքնաշխատ սկզբունք՝ խխ. 2-3, 11, 34, 16:

Գ. Մեզ հետ Աստծու հարաբերությունն այսօր լիովին հիմնված է կյանքի օրենքի վրա. ամեն կյանք օրենք ունի և նույնիսկ ինքնին օրենք է. Աստծու կյանքը բարձրագույն կյանքն է, և այդ կյանքի օրենքը բարձրագույն օրենքն է՝ հմմտ Առկ 30:19ա, Եսյ 40:30-31:

Դ. Հռոմեացիներին ուղղված թղթի 8-րդ գլուխը, որի թեման կյանքի Հոգու օրենքն է (խ. 2), կարելի է համարել ամբողջ Աստվածաշնչի կենտրոնակետը և տիեզերքի կենտրոնը. ուստի, եթե փորձառաբար ապրում ենք Հռոմեացիներին ուղղված թղթի 8-րդ գլուխը, գտնվում ենք տիեզերքի կենտրոնում.

1. Աստված այժմ մեր մեջ է որպես օրենք, որը գործում է ինքնաշխատ, ինքնաբերական և անգիտակցական կերպով, որպեսզի մեզ ազատի մեղքի և մահվան օրենքից. սա Աստծու տնտեսության մեծագույն հայտնաբերումներից, նույնիսկ մեծագույն վերականգնված դրույթներից է՝ 7:18-23, 8:2:
2. Մենք վայելում ենք կյանքի՝ մեր էության մեջ բաշխվելը Աստծու տնտեսության իրագործման համար՝ կյանքի Հոգու օրենքի աշխատելու շնորհիվ՝ Երմ 31:33, Եբր 8:10, Հռմ 8:2-3, 10, 6, 11:
3. Հռոմեացիներին ուղղված թղթի 8-րդ գլխի կյանքի Հոգու օրենքի վայելքը մեզ մտցնում է Քրիստոսի Մարմնի իրականության մեջ, որը Հռոմեացիներին ուղղված թղթի 12-րդ գլխում է. այս օրենքը գործում է մեր մեջ, երբ ապրում ենք Մարմնում և Մարմնի համար՝ 8:2, 28-29, 12:1-2, 11, Փլպ 1:19:

Ե. Իր աստվածային կյանքը մեր մեջ ներդնելով՝ Աստված այդ բարձրագույն կյանքի բարձրագույն օրենքը (եզակի թվով՝ Երմ 31:33) ներդնում է մեր հոգու մեջ, որտեղից այն տարածվում է մեր ներքին մասերում, ինչպիսիք են մեր միտքը, զգացմունքը և կամքը, և դառնում է մի քանի օրենքներ (հոգնակի թվով՝ Եբր 8:10).

1. Մեր մեջ այս օրենքի տարածումը ներդնումն է (Հռմ 8:10, 6), իսկ ներդնելը ներգրելն է (Բ Կրթ 3:3). այն ժամանակ, երբ Տերն Իրեն տարածում, ներդնում և ներգրում է, Նա մեր մեջ կրճատում է Աղամի հին տարրն ու մեր մեջ ավելացնում Քրիստոսի նոր տարրը՝ մեզ համար նյութափոխանակորեն իրագործելով կյանքի փոխակերպումը՝ խ. 18:
2. Մեր ներսում կյանքի օրենքի աշխատելու, տարածվելու շնորհիվ Աստված մեզ դարձնում է նույնը, ինչ Ինքն է կյանքով, բնությամբ և արտահայտությամբ. մենք կերպարանակցվում ենք Աստծու անդրանիկ Որդու պատկերին՝ կյանքի օրենքի աշխատելու շնորհիվ՝ Հռմ 8:2, 29:

Զ. Այն ժամանակ, երբ պահպանում ենք կապը Տիրոջ հետ՝ շարունակելով շփվել Նրա հետ, կյանքի օրենքը՝ կյանքի Հոգու օրենքը, աշխատում է ինքնաշխատ, ինքնաբերական կերպով և առանց ջանքերի՝ Փլպ 2:12-13, Հռմ 8:2, 4, 6, 13-16, 23, Ա Թսղ 5:16-18.

1. Մենք պետք է դադարեցնենք մեր սեփական պայքարելն ու ջանալը՝ Գղտ 2:20ա, հմմտ Հռմ 7:15 -20.
   ա. Եթե չենք տեսել, որ մեղքը օրենք է, և որ մեր կամքը երբեք չի կարող հաղթահարել այս օրենքը, մենք գտնվում ենք Հռոմեացիներին ուղղված թղթի 7-րդ գլխի ծուղակում. մենք երբեք չենք հասնի Հռոմեացիներին ուղղված թղթի 8-րդ գլխին:

բ. Պողոսը նորից ու նորից էր կամենում, բայց արդյունքը միայն կրկնվող ձախողումն էր. ամենաշատը, որ մարդը կարող է անել, որոշումներ կայացնելն է՝ 7:18:

գ. Երբ մեղքը մեր ներսում քնած է, սոսկ մեղք է, բայց երբ այն մեր մեջ արթնանում է բարին անելու մեր ցանկության պատճառով, այն դառնում է «չարը»՝ խ. 21:

դ. Կամենալու փոխարեն՝ մենք պետք է մեր միտքը սևեռենք հոգուն և քայլենք հոգու համաձայն՝ 8:6, 4, Փլպ 2:13:

2. Մենք պետք է համագործակցենք ներբնակվող, ներդրված, ինքնաշխատ և մեր մեջ գործող Աստծու՝ որպես կյանքի Հոգու օրենքի հետ՝ աղոթելով և կախվածության հոգի ունենալով, կանչելով Տիրոջը և աղոթքաընթերցելով Նրա Խոսքը, որպեսզի պահպանենք մեր հաղորդակցությունը Նրա հետ՝ Հռմ 10:12-13, Ա Թսղ 5:17, Եփս 6:17-18.

ա. Քրիստոսին՝ որպես կյանքի օրենքի, փորձառաբար ապրելու գաղտնիքը Նրա մեջ լինելն է՝ Մեկի, ով զորացնում է մեզ՝ ամեն բան անելու համար, իսկ Նրա մեջ լինելու գաղտնիքը մեր հոգում լինելն է՝ Փլպ 4:13, 23:

բ. Որպեսզի ապրենք մեր հոգում մենք պետք է հապաղենք Տիրոջ առջև՝ Նրան հայելու համար՝ Հիսուսին հաղորդակցության մեջ աղոթելով, որպեսզի ընկղմվենք Նրա երեսի մեջ, հագենանք Նրա գեղեցկությամբ և ճառագենք Նրա գերազանցությունը՝ Բ Կրթ 3:16, 18, հմմտ Մտթ 14:23:

Է. Կյանքի հոգու օրենքը կյանքում աճ է պահանջում, որովհետև կյանքի օրենքը գործառում է միայն իր աճելուն զուգընթաց՝ Մրկ 4:3, 14, 26-29.

1. Գահի վրա Քրիստոսի բարեխոսությունը մղող ուժ է կյանքի սերմի համար, որը Նա սերմանել է մեր մեջ հարության ժամանակ՝ Եբր 7:25, Հռմ 8:34:

2. Անդրանիկ Որդին բարեխոսում է մեզ համար, որպեսզի այն կյանքին, որը Նա սերմանել է մեր հոգու մեջ, մղի աճելու, զարգանալու և հագեցնելու մեր բոլոր ներքին մասերը, մինչև որ լիովին ներթափանցվենք Նրա փառավորված ու բարձրացված էությամբ:

3. Մինչ աստվածային կյանքն աճում է մեր մեջ, կյանքի օրենքը գործառում է՝ մեզ ձև հաղորդելով, մեզ կերպարանակից անելով Քրիստոսի՝ որպես Աստծու անդրանիկ Որդու պատկերին, որպեսզի մենք դառնանք Նրա ընդհանրական արտահայտությունը. կյանքի օրենքը մեզ չի կարգավորում՝ սխալ գործելուց պահելու նպատակով. այն կարգավորում է կյանքի ձևը՝ խխ. 2, 29.

ա. Մեր մեջ ներբնակվող նախօրինակը՝ Աստծու անդրանիկ Որդին, ինքնաշխատ կերպով գործում է մեր մեջ՝ որպես կյանքի օրենքը, որպեսզի մեզ կերպարանակից անի Իր պատկերին, «որդիացնի» մեզ. Տերն անձնուրաց կերպով աշխատում է, որպեսզի մեզնից յուրաքանչյուրին դարձնի նույնը, ինչ անդրանիկ Որդին:

բ. Աստծու՝ այս նախօրինակը զանգվածաբար վերարտադրելու ճանապարհն այն է, որ Նա Իր կենդանի նախօրինակին՝ անդրանիկ Որդուն, ներդնում է մեր ամբողջ էության մեջ. եթե համագործակցենք այս սքանչելի նախօրինակի հետ և բացվենք Նրա համար, Նա մեր հոգուց կտարածվի դեպի դուրս՝ դեպի մեր շունչը:

գ. Անդրանիկ Որդին նախօրինակն է՝ չափանիշային նմուշը, Աստծու բազում որդիների զանգվածային վերարտադրության համար, ովքեր Նրա բազում եղբայրներն են, որոնք կազմում են Նրա Մարմինը՝ որպես նոր մարդուն՝ չափանիշային նմուշի՝ Աստծու անդրանիկ Որդու ընդհանրական վերարտադրության և արտահայտության համար՝ խ. 29:

4. Կյանքի օրենքը գլխավորապես բացասական իմաստով չի գործառում՝ մեզ իմացնելով, թե ինչ չանել. ընդհակառակը, կյանքի ածի հետ մեկտեղ կյանքի օրենքը գործառում է մեզ ձև հաղորդելու դրական իմաստով, այսինքն՝ մեզ կերպարանակից անելով Քրիստոսի պատկերին. կյանքի օրենքի գործառույթի միջոցով մենք բոլորս կդառնանք Աստծու հասուն որդիներ, և Աստված ձեռք կբերի Իր տիեզերական ընդհանրական արտահայտությունը:

IV. «Ես նրանց համար Աստված կլինեմ, իսկ նրանք Ինձ համար ժողովուրդ կլինեն»՝ Եբր 8:10, Երմ 31:33բ.

Ա. Այն, որ Աստված մեր Աստված է, նշանակում է, որ Նա մեր ժառանգությունն է՝ Եփս 1:14.

1. Աստված մարդուն որպես անոթ ստեղծեց՝ Իրեն պարունակելու համար (Ծնդ 1:26-27, Հռմ 9:23-24). ուստի Աստված մարդու սեփականությունն է, ինչպես որ անոթի բովանդակությունն է դրա սեփականությունը:
2. Աստված ոչ միայն մեր ժառանգությունն է, այլև մեր բաժակի բաժինը (Սղմ 16:5) մեր վայելքի համար. փրկվել նշանակում է վերադառնալ Աստծուն և նորովի վայելել Նրան որպես մեր սեփականության, ինչպես ցույց է տրված մարդու վերադարձով իր սեփականությանը հոբելյանի ժամանակ (Ղևտ 25:10, Ղկս 4:18-19, 15:17-24, Գրծ 26:18, Կող 1:12):
3. Աստված մեզ տալիս է Հոգուն ոչ միայն որպես մեր ժառանգության երաշխիքի, այլև որպես այն բանի կանխահամի, ինչ ժառանգելու ենք Աստծուց (Բ Կրթ 1:22). Հոգու գրավադրումը մեր մեջ քիչ-քիչ ավելի շատ Աստված է ավելացնում, մինչև որ մտնենք հավիտենություն և ձեռք բերենք Աստծուն՝ որպես մեր լիակատար վայելքի:

Բ. Այն, որ մենք Աստծու ժողովուրդն ենք, նշանակում է, որ մենք Նրա ժառանգությունն ենք՝ Եփս 1:11, 14, 18, 3:21.

1. Մենք ոչ միայն ժառանգում ենք Աստծուն՝ որպես մեր ժառանգության (1:14) մեր վայելքի համար, այլև դառնում ենք Աստծու ժառանգությունը (խ. 11) Նրա վայելքի համար:
2. Մեր մեջ Աստծու ներդրվելու շնորհիվ է, որ մենք կազմությամբ դառնում ենք Աստծու ժառանգությունը. սա փոխակերպում է, ինչպես նաև սուբյեկտիվ սրբացում:
3. Աստված Իր Սուրբ Հոգուն զետեղել է մեր մեջ որպես կնիքի (խ. 13), որը մեզ վրա նշան է դնում և ցույց տալիս, որ Աստծուն ենք պատկանում. այս կնիքը կենդանի է, և այն աշխատում է մեր ներսում՝ մեզ հագեցնելով ու փոխակերպելով Աստծու աստվածային տարրով, մինչև մեր մարմնի փրկագնվելը:
4. Ի վերջո Աստծու և մարդու փոխադարձ ժառանգությունը հավիտենապես դառնում է Աստծու ժառանգությունը սրբերի մեջ (խ. 18). սա

կլինի Նրա հավիտենական արտահայտությունը ողջ լեցունությամբ տիեզերականորեն և հավիտենապես (Հյտ 21:11):

V. «Քնավ չեն ուսուցանի յուրաքանչյուրն իր համաքաղաքացուն և յուրաքանչյուրն իր եղբորը՝ ասելով. «Ճանաչի՛ր Տիրոջը», որովհետև բոլորն Ինձ կճանաչեն՝ նրանց փոքրից մինչև մեծը»՝ Եբր 8:11, Երմ 31:34ա.

Ա. Կյանքի գործառույթը մեզ թույլ է տալիս ճանաչել Աստծուն կյանքի ներքին ճանապարհով. մենք կարող ենք ճանաչել Աստծուն սուբյեկտիվորեն ներսից կյանքի զգացման շնորհիվ, որը մեր ներսում աստվածային կյանքի զգացողություն է, գիտակցությունը՝ Հռմ 8:6, Եփս 4:18-19, Փլպ 3:10ա.

1. Կյանքի զգացումը բխում է աստվածային կյանքից (Եփս 4:18), կյանքի օրենքից (Հռմ 8:2, Եբր 8:10) և Հոգու օծումից (Ա Հվի 2:27):
2. Բացասական կողմից կյանքի զգացումը մահվան զգացողությունն է, իսկ դրական կողմից այն կյանքի և խաղաղության զգացողությունն է՝ Հռմ 8:6, Եսյ 26:3:
3. Մենք պետք է ապրենք կյանքի զգացումի համաձայն՝ կյանքի սկզբունքով, ոչ թե ճշտի և սխալի սկզբունքի՝ մահվան սկզբունքի համաձայն:
4. Սա նշանակում է ապրել կյանքի ծառի սկզբունքի համաձայն, այլ ոչ թե բարու և չարի գիտության ծառի սկզբունքի համաձայն՝ Ծնդ 2:9:
5. Կյանքի զգացումը մեզ իմանալ է տալիս՝ արդյոք բնական կյանքում ենք ապրում, թե աստվածային կյանքում, մսեղիում, թե հոգում:

Բ. «Քրիստոնյան, որպեսզի ծառայի Աստծուն և աշխատի Նրա համար, պետք է սովորի խուսափել բարու և չարի գիտության ծառից…. Միայն կյանքի ծառին դիպչողները կտեսնեն, որ իրենց կյանքն ու աշխատանքը կմնան Նոր Երուսաղեմում»: (*«Վոչման Նիի սպասավորության վերսկսման ժամանակ տրված հաղորդումներ», հտ 1)

VI. Վերջնարդյունքում ներբնակվող Հոգու՝ որպես աստվածային կյանքի ինքնաշխատ օրենքի, կյանքի Հոգու օրենքի մեր վայելքը Քրիստոսի Մարմնի մեջ է և Քրիստոսի Մարմնի համար է, ինչի նպատակը մեզ Աստված դարձնելն է կյանքով, բնությամբ, արտահայտությամբ, բայց ոչ Աստվածությամբ, որպեսզի իրագործվի Նրա հավիտենական տնտեսության նպատակը՝ Նոր Երուսաղեմը՝ Հռմ 8:2, 28-29, 12:1-2, 11:36, 16:27, Փլպ 1:19, հմմտ Գղտ 4:26-28, 31:

© 2020 Living Stream Ministry